ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Հեկտոր Մարկոս Թիմերմանի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ փոխնախարար Աշոտ Հովակիմյանի:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունները սերտ զարգացում են ապրում՝ մաղթելով բազում նոր ձեռքբերումներ հայ-արգենտինյան բարեկամությանը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ նաեւ Արգենտինայի հայ համայնքին՝ մասնավորապես ընդգծելով, որ այն Սփյուռքի լավագույնս կազմակերպված եւ հզոր համայնքներից մեկն է: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս նախարարի, իր գնահատանքը հայտնեց Արգենտինայի իշխանություններին՝ հայ ժողովրդի հանդեպ տածած առանձնահատուկ վերաբերմունքի համար, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման եւ Լ.Ղ. հակամարտության խաղաղ կարգավորման գործում ցուցաբերվող զորակցության համար:

Իր հերթին, Արգենտինայի արտգործնախարարը, ուրախություն հայտնելով հանդիպման առիթով՝ Նորին Սրբությանը փոխանցեց Արգենտինայի Հանրապետության նախագահի ողջույնները, ապա անդրադարձավ 2011 թ. մայիսին Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Արգենտինա կատարած հովվապետական այցին: Հեկտոր Մարկոս Թիմերմանը հույս հայտնեց, որ իր այցելությունը պիտի նպաստի երկու երկրների հարաբերությունների հետագա ամրապնդմանը: Խոսելով Արգենտինայի հայ համայնքի մասին՝ նախարարն ընդգծեց, որ այն կարեւոր դերակատարություն ունի երկրի զարգացման գործում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Տերը առաջնորդեցի ու բարօրության մեջ պահի Արգենտինան եւ նրա ժողովրդին:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Արգենտինայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վահագն Մելիքյանն ու ՀՀ-ում Արգենտինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Դիեգո Էռնեստո Ալվարես Ռիվերան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ